«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արման Ասրյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, մագիստրոս
arman.asryan@yahoo.com

Սոնա Բալոյան
Հաշվապահության ուսուցման միջազգային կենտրոն, մագիստրոս
sona.baloyan@gmail.com

Տեսական անդրադարձ օտարերկրյա ուղղակի ներդրումներին: Օտարերկրյա ներդրումը[1] գույքի ցանկացած տեսակ է, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով: Օտարերկրյա ուղղակի ներդրումը (ՕՈՒՆ), որպես օտարերկրյա ներդրումների տարատեսակ, առանձնանում է այն ստացող երկրի տնտեսական աճի և տնտեսության վերակազմավորման վրա իր նշանակալի դրական ազդեցությամբ: Այն համարվում է կարևոր միջոց ստացող երկրներում մարդկային կապիտալի զարգացման ու կուտակման, ինչպես նաև նոր գաղափարների ու գործարար կարողությունների ձևավորման գործում:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների պատկերը Արցախի Հանրապետությունում: Արցախի Հանրապետությունում օտարերկրյա ուղղակի ներդրումները 2016թ.-ին կազմել են 1866.4 մլն դրամ և 2015թ. նկատմամբ նվազել են 80.2 տոկոսով: ՕՈՒՆ մեկ շնչի հաշվով 2016թ.-ին կազմել են 12774.8 դրամ՝ 2015թ.-ի 61686.3 դրամի դիմաց, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են համապատասխանաբար 0.8 և 4.4 տոկոս[2]: Երկրում օտարերկրյա ուղղակի ներդրումները հիմնականում կենտրոնացված են արդյունաբերության (հանքագործական, վերամշակող և սննդի), շինարարության ճյուղերում և ծառայությունների ոլորտում (կապ, հյուրանոց): Ներդրումների ձևավորման հիմնական աղբյուր են հետևյալ տասնչորս երկրները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ավստրալիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Իրանի Իսլամական Հանրապետություն, Լիբանան, Շվեյցարիա, Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Գերմանիա, Կանադա, Իսպանիա, Ուկրաինա, Նիդերլանդներ: Իսկ օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները մեծամասամբ կենտրոնացված են Ստեփանակերտ քաղաքում, Մարտակերտի, Ասկերանի և Շուշիի շրջաններում: Գծապատկեր 1-ում ներկայացված է Արցախի Հանրապետությունում ՕՈՒՆ-ի դինամիկան 2002-2016 թթ.-ի համար:

---

[1] Տես ԼՂՀ օրենքը օտարերկրյա ներդրումների մասին:
[2] Տե՛ս ԼՂՀ Վիճակագրական հաշվեկշիռ 2016:

Արցախի Հանրապետությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացման իրավական կարգավորումը և պաշտպանությունը: Արցախի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների իրականացման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը սահմանված են «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքում:



Գծապատկեր 1. Օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը Արցախի Հանրապետությունում 2002-2016 թթ.

Նույն օրենքում հստակեցված են նաև օտարերկրյա ներդրումների պաշտպանությանն ուղղված երաշխիքները: Նշենք դրանցից ամենանշանակալիները: Առաջին՝ Արցախի Հանրապետության՝ օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 10 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը: Երկրորդ՝ օտարերկրյա ներդրողներն ունեն նյութական և բարոյական այն վնասների դատական կարգով փոխհատուցման իրավունքը, որոնք հասցվել են պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից երկրի օրենսդրությանը հակասող գործողությունների արդյունքում:

«Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքում անդրադարձ է կատարվում նաև օտարերկրյա ներդրումների հարկմանը և դրանց խթանման հարկային մեխանիզմներին: Ըստ սույն օրենքի՝ այն գույքը, որն օտարերկրյա ներդրողի կողմից Արցախի Հանրապետություն է ներմուծվում որպես օտարերկրյա ներդրումներով ձեռնարկության կանոնադրական հիմնադրամ, ինչպես նաև սեփական արտադրության համար նախատեսված գույքը (հումք, կիսապատրաստուկներ, լրակազմող իրեր, պահեստամասեր և այլն) ազատվում են մաքսատուրքերի գանձումից: Ի հավելումն՝ միջազգային պայմանագրերի հիման վրա, որպես օտարերկրյա ներդրում, Արցախի Հանրապետություն ներմուծվող գույքն ազատվում է մաքսատուրքերից այն ժամկետներում, որոնք սահմանված են համապատասխան պայմանագրերով:

Միջազգային ճանաչման հիմնախնդրի և օտարերկրյա ուղղակի ներդրումների միջև առկա երկկողմանի կապի վերլուծություն: Միջազգային չճանաչվածության ամենաէական տնտեսական հետևանքներից մեկը դե ֆակտո պետության մեկուսացումն է ֆինանսավորման միջազգային աղբյուրներից և

ռեսուրսներից: Չճանաչված պետությունների համար առաջանում են դժվարություններ[1] փոխառությունների, օտարերկրյա ուղղակի ներդրումների և այլ ռեսուրսների ներգրավման ժամանակ: Նրանց չճանաչված կարգավիճակը և դրանից բխող քաղաքական ու տնտեսական ռիսկերը դարձնում են նրանց պակաս գրավիչ այլ պետությունների և անդրազգային կորպորացիաների կողմից օտարերկրյա ուղղակի ներդրումներ կատարելու տեսանկյունից: Ի հավելումն՝ կոնֆլիկտին ոչ մասնակից երկրների շրջանում կա տարածված ըմբռնում-մտավախություն[2], համաձայն որի՝ չճանաչված երկրի (այս դեպքում՝ Արցախի Հանրապետության) հետ նման տնտեսական «շփումը» կարող է դիտվել որպես անկախության ճանաչմանն ուղղված քայլ, ինչն իր հերթին հակամարտող կողմի (այս դեպքում՝ Ադրբեջանի) իշխանությունների կողմից կընկալվի որպես անհարգալից վերաբերմունք դեպի իրենց սուվերենությունը: Վերոնշյալ հանգամանքներն են պատճառը, որ միջազգային ճանաչում չունեցող երկրները (ինչպիսին է Արցախի Հանրապետությունը), չունենալով անդամակցություն միջազգային կազմակերպություններին, հիմնականում միջազգային շուկաներ և համակարգեր մուտք են գործում իրենց հովանավոր պետությունների միջոցով, քանի որ նրանց համար արգելված է ուղիղ մուտքը:

Միևնույն ժամանակ չճանաչված երկրում կայուն տնտեսության առկայությունը մեծացնում է տվյալ երկրի տնտեսական «լեգիտիմությունը» և նրան դարձնում ցանկալի գործընկեր այլ երկրների համար: Այս հանգամանքն էլ իր հերթին կարող է անուղղակի խթան հանդիսանալ կոնֆլիկտին ոչ մասնակից երկրների համար՝ ընդունելու դիտարկվող չճանաչված երկրի անկախությունը՝ հիմք ընդունելով երկրի տնտեսական կշիռը և նրա հետ տնտեսական գործընկերության հաստատման առավելությունները: Այս տեսակետից ակնհայտ է այն ազդեցությունը, որն օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման խթանումը կարող է ունենալ չճանաչված երկրի վրա: Կիրառելով ներդրումների խթանման տարբեր մեխանիզմներ (ներկայացված են հաջորդ բաժնում) և այդպիսով ներգրավելով առավել մեծաքանակ օտարերկրյա ուղղակի ներդրումներ՝ չճանաչված պետությունները կարող են խորացնել տնտեսական փոխհարաբերություններն այլ երկրների հետ, ինչն էլ իր հերթին հավելյալ նշանակալի խթան հանդիսանա այդ պետությունների անկախությունն ընդունման գործընթացում:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանումը Արցախի Հանրապետության միջազգային չճանաչվածության պարագայում: Չնայած միջազգային ճանաչման հիմնախնդրի շուրջ առաջացած փակուղային վիճակին՝ Արցախի Հանրապետությունը կարող է որոշակի ջանքեր գործադրել միջազգային ներդրումային հարթակում առավել մեծ և ընդգրկուն մասնակցություն ցուցաբերելու համար: Թեպետ չճանաչվածության հանգամանքը էականորեն սահմանափակում է այն իրավական հիմքերը, որոնց շրջանակներում հանրապետությունը կարող է հանդես գալ որպես օտարերկրյա ներդրումների ստացող կողմ, այնուամենայնիվ, գոյություն ունեն մեխանիզմներ, որոնց համաձայն հնարավոր է ընդլայնել Արցախի հանրապետության մասնակցությունը միջազգային ներդրումներին որպես ստացող կողմ: Ի մասնավորի՝ հարկ է նշել *երկկողմ ներդրումային պայմանագրերի* (**Bilateral Investment Treaties**) կնքումը

1 Տե՛ս Caspersen, Nina "Unrecognized States: The Struggle for Sovereignty in the Modern International System",2013 Polity.

2 Տե՛ս Waters, Christopher. "Rule of Law in the Secessionist States." In The State of Law in the South Caucasus, by Christopher Waters, 59-81. London: Palgrave Macmillan, 2005.

խրախուսող միջոցառումների իրականացման հնարավորությունը: Ի տարբերություն ՕՈՒՆ-ի իրականացման մնացած իրավական ձևակերպումների՝ երկկկողմ ներդրումային պայմանագրերը թույլ են տալիս անգամ միջազգային ճանաչում չունեցող քաղաքական միավորներին լիարժեք կերպով հանդես գալ որպես ՕՈՒՆ ստացող կողմ (օրինակ՝ Թայվանի Հանրապետություն):

Հարկային բարեփոխումները ևս կարող են օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի ավելի մեծ ծավալների խթան դառնալ: Օրինակ՝ Սոմալիլենդի Հանրապետությունը, հանդիսանալով ևս միջազգայնորեն չճանաչված պետություն, էականորեն մեծացրել է երկիր մտնող ՕՈՒՆ-ի ծավալները՝ ի հաշիվ հետևյալ հարկային բարեփոխումների[1]:

ա) Համաձայն երկրում ընդունված միջազգային ներդրումների մասին օրենքի՝ *բոլոր օտարերկրյա ուղղակի ներդրումներն ազատվել են շահութահարկից երեք տարի ժամկետով:*

բ) Համաձայն նույն օրենքի՝ *վերոնշյալ ժամկետի ավարտից հետո օտարերկրյա ուղղակի ներդրումները կարող են հարկվել 50%-ով ցածր շահութահարկի դրույքաչափով, եթե ներդրումներից ստացված շահույթը վերաներդրվի երկրի ներսում:*

Օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման այլ տարածված տնտեսական մեխանիզմներից են *հարկային վնասի տեղափոխման հաստատումը*[2]*, օտարերկրյա ներդրումների երաշխավորման գործակալությունների հիմնումը* (Կոսովոյի Հանրապետություն[3]), *ֆիքսված ակտիվների ձեռքբերմանն ուղղված միջոցների նկատմամբ հարկային զեղչի*[4] *կիրառումը* (Մոնտենեգրոյի Հանրապետություն) և այլն:

---

1 Տե՛ս Mustafe Mohamed H. Dahir, Non-recognition of Somaliland in international law and its legal implications for foreign investment. Աղբյուրը՝ http://repository.up.ac.za/handle/2263/30124

2 Տե՛ս Tax Loss Carryforward: Աղբյուրը՝ http://www.investopedia.com/terms/t/tax-loss carryforward.asp

3 Տե՛ս How friendly is Kosovo for Foreign Direct Investments: Աղբյուրը՝ http://legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2016/12/How-friendly-is-Kosovo-for-Foreign-Direct-Investments-Policy-Paper-GLPS.pdf

4 Հարկային վճարը նվազեցվել է տվյալ ժամանակահատվածում կազմակերպության կողմից ֆիքսված ակտիվների ձեռքբերմանն ուղղված միջոցների արժեքի 25%-ի չափով:

Արման Ասրյան, Սոնա Բալոյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ *օտարերկրյա ուղղակի ներդրումներ, միջազգային ճանաչման հիմնախնդիր, ՕՈՒՆ-ի խթանման մեխանիզմներ, երկկողմանի ներդրումային պայմանագիր*

Աշխատանքում իրականացվում է Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման և երկրում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի միջև կապի վերլուծություն: Սկզբնապես տեսական անդրադարձ է կատարվում օտարերկրյա ուղղակի ներդրումներին: Ներկայացվում է ՕՈՒՆ-ի պատկերը Արցախի Հանրապետությունում: Այնուհետև քննարկվում է երկրների միջազգային ճանաչման և նրանցում ՕՈՒՆ-ի ներհոսքի միջև առկա երկկողմանի կապը: Արցախի Հանրապետության համար առաջարկվում են օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման հատուկ մեխանիզմներ, որոնք թույլ կտան մեծացնել երկրում ՕՈՒՆ-ի ներհոսքի ծավալները միջազգային չճանաչվածության հանգամանքի առկայության պարագայում:

Арман Асрян, Сона Балоян

АНАЛИЗ ВЗАИМОСВЯЗИ МЕЖДУ МЕЖДУНАРОДНЫМ ПРИЗНАНИЕМ РЕСПУБЛИКИ АРЦАХ И ПРИТОКАМИ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В СТРАНЕ

Ключевые слова: *прямые иностранные инвестиции, международное признание, схемы стимулирования ПИИ, двусторонний инвестиционный договор*

В этой статье представлен многодисциплинарный анализ взаимосвязи между международным признанием Арцахской Республики и притоками прямых иностранных инвестиций в стране. Во-первых, представлены различные теоретические аспекты, касающиеся ПИИ. Проанализирована текущая ситуация с ПИИ в Арцахской Республике, выявлены динамические и структурные особенности. В целом обсуждается двусторонняя связь между ПИИ и международным признанием. Для Арцахской Республики предложены конкретные схемы стимулирования инвестиций, которые могут увеличить прямые иностранные инвестиции в стране, несмотря на непризнанный статус.

Arman Asryan, Sona Baloyan

ANALYSIS OF THE RELATIONSHIP BETWEEN THE INTERNATIONAL RECOGNITION OF THE ARTSAKH REPUBLIC AND THE FOREIGN DIRECT INVESTMENTS INFLOWS IN THE COUNTRY

Keywords: *foreign direct investment, international recognition, FDI incentive schemes, bilateral investment treaty*

This article presents a multidisciplinary analysis of the relationship between the international recognition of the Artsakh Republic and the foreign direct investment inflows in the country. First, various theoretical aspects regarding the FDI are presented. The current situation of the FDI in the Artsakh Republic is analyzed, the dynamic and structural features are revealed. The two-sided relationship between FDI and international recognition is discussed in general. Specific incentive schemes are suggested for the Artsakh Republic which can increase foreign direct investments in the country, despite its unrecognized status.